ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն **26.12.2014**

Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալություն/

Հայաստանի Սոցիալական Նեղրումների Հիմնադրամ

Ծրագրի անվանումը: Սոցիալական ներդրումների եւ տեղական զարգացման Ծրագրի

կառավարման տեղեկատվական համակարգի մշակում

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ SDC-9

Հայաստանի սոցիալական նեղրումների հիմնադրամ (ՀՄՆՀ) ստացել է դրամաշնորհ Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալությունից (ՇԶՀԳ) և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ Սոցիալական ներդրումների եւ տեղական զարգացման Ծրագրի կառավարման տեղեկատվական համակարգի մշակման համար:

Առաջադրանքի նպատակը. Սույն առաջադրանքի հիմնական նպատակն է նախագծել եւ մշակել Կառավարման Տեղեկատվական Համակարգ ՄՆՏԶ ծրագրի համար:

Խորհրդատուն պետք է՝

- Ուսումնասիրի եւ վերլուծի առկա ՀՄՆՀ կառավարման և տեղեկատվական համակարգը:

- Հիմնվելով ապագա ՄՆՏԶ ծրագրի նախագծային փաստաթղթերի վրա (ծրագրի փորձաքննության փաստաթուղթ, ծրագրի ղեկավար ձեռնարկ եւ այլն) եւ գոյություն ունեցող ԿՏՀ վերլուծության վրա, նախագծեի նոր ԿՏՀ, այդ թվում՝

1. «Use cases» սցենարներ եւ օգտագործողների պահանջները:

2. Տվյալների կառուցվածքը:

3. ԿՏՀ կառուցման բլոկներ:

4. Անվտանգության համակարգ եւ օգտագործողների դերերն ու դրանց հասանելի տվյալները:

5. ԿՏՀ ինտերֆեյսները:

6. Օգտագործվելիք տեխնոլոգիաներն ու գործիքները:

7. Համացանցի եւ հիմնադրամի ներսում օգտագործվող ԿՏՀ ինտերֆեյսներ:

8. ԿՏՀ օգտագործողների ուղեցույցներ օգտագործողների դերերի եւ համակարգի կառավարչի համար:

Առաջադրանքի տևողությունը 120 օր:

Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

Ընտրության չափանիշներն են.

- Կրթություն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում
- Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի կառավարման տեղեկատվական համակարգերի նախագծման և պահպանման նախկին փորձ
- Microsoft-ի տեխնոլոգիաների կիրառմամբ համացանցային համակարգերի նախագծման և զարգացման փորձ
- Microsoft-ի հետևյալ լեզուների և տեխնոլոգիաների հետ աշխատելու առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ՝ SQL Server (տարբերակ 2008 R2 եւ), C #, Net, VBA, MS Access, MS IIS 7 եւ բարձր

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-իփոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011» («Խորհրդատուների Ուղեցույցներ» (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011)), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers (January, 2011) բաժին V-ում սահմանված Անհատ խորհրդատուների ընտրության ընթացակարգերին համաձայն:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՄՆՀ գրասենյակից Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Ձեռքբերումների բաժին, աշխատանքային օրերին ժ. 10:00-ից մինչև ժ.17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան 2015 թ. հունվարի 16-ը, ժամը 17:00-ը:

Հայասանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ

Ձեռքբերումների բաժին

Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ

Էլ-փոստ՝ asif@armeniasif.am

Հեռ: (+37410) 24 71 42